ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ք. Ալավերդի, Զորավար Անդրանիկ 8/1
☎ (253) 2-41-00, E-mail: alaverdi.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«30» ապրիլի 2020 թվական, N 28-Ն

ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 5-րդ կետով, «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 23-րդ հոդվածի 5-րդ մասով՝ համայնքի ավագանին **ո ր ո շ ու մ է.**

1. Տնտեսական հարաբերություններ բնագավառի ճանապարհային տրանսպորտ բաժնի ծախսերը պակասեցնել 500.0 հազ. դրամով (բաժին 04, խումբ 5, դաս 1, ծրագիր 51, հ/հ 900262504021, հոդված 5113) և այն ուղղել նույն բնագավառի ոռոգում բաժին (բաժին 04, խումբ 2, դաս 4, ծրագիր 51, հ/հ 900262000905, հոդված 5113):
2. Օրենսդիր և գործադիր մարմինների պահպանման ծախսերն ավելացնել 150.0 հազար դրամ (բաժին 01, խումբ 1, դաս 1, ծրագիր 51, հ/հ 900262161038, հոդված 4251):
3. Համայնքի պահուստային ֆոնդը պակասեցնել 150.0 հազար դրամով (բաժին 11, խումբ 1, դաս 2, ծրագիր 51, հ/հ 900262577027, հոդված 4891):
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Համայնքի ավագանու անդամներ՝

			ԿՈՂՄ	ԴԵՄ	ՁԵՌՆՊԱՀ
1.	Արտուշ	Աբելյան			
2.	Արթուր	Դավթյան			
3.	Արմեն	Կարապետյան			

4.	Սեյրան	Հովհաննիսյան			
5.	Արայիկ	Ձավարյան			
6.	Հարություն	Ձավարյան			
7.	Լաուրա	Մելիքսեթյան			
8.	Վալերի	Վարոսյան			

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ս.Գ. ԽԵՉՈՒՄՅԱՆ